

լաթները, և բոլոր հրաւիրեալները հետեւեցան անոնց օրինակին:

« Ըմպենք նախ և առաջ ի պատիւ մեծին Արա- մազդի, երկնի և երկրի ամենակարող Արար- չին », ըսաւ Թագաւորը իր բամբ ու խոր ձայնովը:

Եւ ամէնքը խմեցին ի պատիւ հեթանոս Հա- յաստանի գլխաւոր աստուածին:

Երբ վար նստան, խումբ մը զուարթ աշուղ- ներու, հաւաքուելով ներս, նուագեցին իրենց քնարներն ու երգեցին Վահագն՝ պատերազմի աստուածին երգը:

« Երկներ երկին և երկիր,
Երկներ և ծիրանի ծով.
Երկն ի ծովուն ունէր զկարմիրիկ եղեգնիկն,
Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր »:

Աշուղներուն յաջորդեց երաժիշտներու խումբը. Թմբկահար, սրնգահար, քնարահար և փողահար, որոնք նուագեցին բուռն, խանդավառ ու սիրատարի նուագներ, և պարուհիներ սկսան իրենց հեղաքայլ ու ծամածուռ պարը: Յետոյ երկու գուսաններ գայթ ի գայթ մտան ներս և զօսցուցին կոչնականները իրենց ազատ, յան- գուգն կատակաբանութիւններով: Գինովցան ամէնքն ալ, և նոյն իսկ Թագուհին Սաթենիկ անփոյթ էր ու զուարթ:

Յաջորդ առաւօտ կանուխ՝ մենք տղաքս հա- ւաքուեցանք գիւղի հրապարակին մէջ, ու վերսկսանք ճամբորդութիւննիս: Սեւանայ Լիճը կը շառագունէր, նման ողջակիզութեան կրա- կին, մարմարեայ անձուն կոնքի մը մէջ: Ինք- ղինքս զգացի ես իբր կարմիր տաբատով ու ոսկի սուրով բարձրագլուխ իշխան մը, որ կը

վերագառնար Հայաստան, երկու հազար տարի- ներու շրջանէ մը վերջ:

Մեր կոնակի մասնադները հիմա աւելի ծանր կը կշռէին քան Թէ նախորդ օրը: Տղաք, ինծի պէս, իրենց զգեստները փոխանակել էին ու- աւելեցներով: Բայց ես գիտեցի որ Արշակին մասնադը լեցուն չէր, և Թէ ինք չէր հագած իր « Ծըրզի » շապիկը՝ սպիտակ ու կապուտակ գիծերով: Իմ հաշուովս, ատիկա կրկին արժէքն ունէր հացին, պանիրին, կարագին ու մեղրին, զոր ստացել էի իմ շապիկիս փոխանակու- Թեամբ:

« Ի՞նչ ստացար « Ծըրզի » իդ փոխարէն », հարցուց իրեն. բայց ինքը գծկամակ էր ըսելու:

« Քեզի պէս աղուէս » - գոչեցի - օն, ըսէ ինծի, ի՞նչ ստացար. Կովկասեան ատրճանակ մը »:

Ան գլուխը ցնցեց:
« Երկնքի սիրոյն համար, Արշակ, ինչո՞ւ խորհրդաւոր ձեւ մը կու տաս այս խնդրոյս »:

Արշակ քմծիծաղով մ'ըսաւ « Սաթենիկ, ան սիրուն գէմքով աղջիկը որ մեզի գուռը բացաւ, սիրեց այն շապիկը »:

« Ուստի զայն իրեն նուիրեցիր: Կեցցես, Արշակ: Հիմա կը յուսամ Թէ դու բարի հայ մ'ըլլաս »:

Բայց ինքը չփոթեցաւ այս հայրենասիրական գովեստէս:

Քիչ մը ատեն լռութեամբ առաջ քաշեցինք: Արշակին աչքերուն նայուածքէն հասկցայ որ ապահովապէս իր ալ մտքէն իմ մի և նոյն խոր- հուրդներս կ'անցնէին: Մեր սրտերուն մէջ խորտակուեցաւ բան մը, զոր կարող չէինք խօս- քով արտայայտել, և բաւական ժամանակ ան- ցաւ, մինչեւ որ մեզմէ մին կամ միւսը խօ- սեցաւ դարձեալ:

Ձ. ՍԻՒՐՄԵԼԵԱՆ



ԽՈՐՀՐԴԱՍՔՈՂ, ԱՆՍՈՎՈՐ*...

Իրենց երկրին են եկեր գաւառներէն զանազան,
Այս այրին մէջ քարեղէն՝ եղբայրացիք իրարու.
Փառքի բոցեր ընծայող ազատութեան սրբազան
Թառած իրենց ա՛չքն արու:

Խմբապետին իրենց հայ, խորհրդասրբող, անսովոր,
Ներկայութիւնն իսկ որուն հոս առասպել կը թուի,
Ձերմ փարած են զգացմամբ, իրենց տիրած է սրտին
Լուծով սիրոյ, ո՛չ վախի:

Ոմանք՝ զաւկի տէր հայրեր, այլք՝ զաւակներ դեռ անփորձ,
Երիտասարդ են սրտով ազատորդիքն այս բողոք,
Արհեստաւոր կամ բանուոր, վաճառական, հողագործ,
Ահա՛ դարձեր են զինուոր:

Պատրաստ, արի՛, անհամբեր, զերդ աղեղէն մեկնող նետ,
Խմբապետին կը սպասեն հըրամանին վճռական.
... Ու քարերն իսկ ընդվզին պիտի կարծես՝ իրենց հետ՝
Ընդգէմ անարգ բռնութեան:

ՀՐԱՉ ՔԱԶԱՐԵՆՑ

1943, Նոյեմբեր.

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՍԻՐԱՀԱՐ

Հայ դպրութեանց հողերուն վըրայ՝ մշակ նորընծայ՝
Կ'աշխատէի, ահազանգ երբ անդունդներդ հնչեցին.
Ծածանեցան զըրօշներ և մերկացան սրբիներ,
Եւ ռազմերգներ սանձարձակ՝ բարձունքներու վըրայ ուժգին:

Հայ դպրութեանց պարտէզին ծաղիկներն իմ սրտիս մէջ,
Արեգակն իմ սրտիս մէջ, դուն զիս տեսար, իտալիա,

* 8 սեպ. 1943-էն ետք՝ Հ. Ք. որ զէնքի տակ կը գտնուէր տեղակալի աստիճանով, միացաւ այն ուժերուն՝ որոնք կը մարտնչէին հիւսիսային իտալիոյ գերման բռնազրաման ջրամօթ. խմբ.